

քծնող, չարալեզու, նամակագիր մը: Զարմանալին այն է որ Յակոբ Դ. ի Հռոմէադաւանութեան դառնալուն իրրեւ փաստաթուղթ գործածուած է ողորմելի այս նամակներուն վերջինը:

Ղըլմպիկ Սահակի այս նամակին մէջ Յակոբ Դ. կ'ամբաստանուի այնպիսի ամբաստանութիւններով, որոնք որոշ է թէ սանձարձակ եւ անպատասխանատու մարդոց հերիւրանքներ են: Առաջին, «չԱկոր Կաթողիկոսն զիւր եղբորորդի Մանուէլն սուրբ Սարգսի պահոցն յղեաց առ փափն Ֆոանկաց, բազում նշխարք առնելով ընդ իւր՝ զՀռիփսիմեանցն, զԳայեանեանցն եւ զՆախաժկային, եւս այլ բազում նշխարք ընծայ Փափին, զի եւ նա բազում գանձս տացէ սմա (Յակոբ Դ. ի), եւ սա առեալ գնասցէ ի Վրաց տուն, եւ զՄանուէլն օծեսցէ թագաւոր Հայոց:»

Հոս ամբողջ ըստածը պարզապէս ծիծաղելի է: Ի՞նչ արժէք պիտի ներկայացնէին Պապին համար, յիշուած այս նշխարները: Ի՞նչ արժէք կրնային ներկայացնել Հայոց ունեցած բոլոր նշխարները: Ապահովարար ասոնցմով ձեռք բերուելիք դրամով ոչ թէ Հայոց, այլ նոյնիսկ թուով աւելի փոքր ու համեստ ժողովուրդի մը համար կարելի չէր թագաւոր օծուիլ: Ենթադրենք որ կարելի ըլլար Մանուէլը կամ ուրիշ մը Վրաց տունը կամ Վրաստանի մէջ Հայոց թագաւոր օծել ծախուած նշխարներու գրնով... Յետո՞յ: Ի՞նչ ուժ, ի՞նչ բանակ պիտի կարենար այս նոր օծեալ Հայոց թագաւորը բերել Հայաստան (գէթ Պարսկահայաստան) տէր ըլլալու իր թագաւորութեան: Արդեօք Հայոց թագաւորը Վրաստանի մէջ վիրահայերո՞ւ վրայ պիտի թագաւորէր: Կարելի է՞ր որ Յակոբ Զուղայեցին այսքան ցնորամիտ մէկը եղած ըլլար: Անշուշտ ո՛չ:

Սակայն այս ստարանութիւնն ալ իւր աղբիւրը ունի: Ղըլմպիկ Սահակ ինքն է որ յղացեր է ասիկա, թէ եւ ինքն ալ «վաւերականացնելու» ճիգ չէ խնայած «մանրամասնութիւններ» աւելցնելով:

Նշխարներ վաճառելու եւ Հայոց թագաւոր օծելու պատմութեան առաջին

յիշատակութիւնը գտանք Կարկուտ Ոնոփրիոս վարդապետի 1665ին գրած մէկ նամակին մէջ: Նամակը ժամանակին հրատարակեց երջանկայիշատակ Մեսրոպ Նշանեան Երուսաղէմի Պատրիարքը Սիմէոն 1933 Մայիսի թիւին մէջ (էջ 151-3): Այս նամակին մասին քիչ վերջ իր կարգին: Կարկուտ ի միջի այլոց կը գրէ: «Վեշտաններոգը՝ զի ստապարծ եւ բաղայօղ բանիւ պատճառեաց ի դէմս աշխարհի ի սուրբ յերուսաղէմ գնալ եւ զաղտագողի խորհրդեամբ բարձեալ ընդ ինքեան զնշխար սրբոյն Հռիփսիմեայ եւ Գայեանեայ՝ կամէր տանել յերկիրն Ֆոանկաց եւ այնու առնուլ բազում գանձս ի նոցանէ եւ գալ օծանել զոմն թագաւոր Հայոց ընդդէմ իշխանութեան Պարսից», Հոս հեքիաթը անպաճոյճ է, չունի Ղըլմպիկ Սահակի ճոխ յաւելումները Նախաժկային եւ ուրիշ սուրբերու նշխարներուն: Կը պակսի Յակոբ Դ. ի եղբոր որդի Մանուէլի անունը: Վերջինս է որ Ղըլմպիկ Պապին կը ղրկէ, իսկ Ոնոփրիոս նոյն իսկ Յակոբ Կաթողիկոսին տանիլ կուտայ նշխարները: Ոնոփրիոս չի յիշեր Վրաստանը: Սակայն ապացուցիչն այն է որ թէ՛ Ղըլմպիկ Սահակ եւ թէ՛ Ոնոփրիոս, շատ մօտէն տեղեակ եւ ծանօթ եղած են Յակոբ Դ. ի գործերուն: Ղըլմպիկ առ Յակոբ Դ. գրած իր նամակին մէջ կը վիկայէ որ անկէ ստացած է վարդապետական դաւազան, եղած է անոր հետ, աշխատած անոր համար իրրեւ նուիրակ եւ եղած է իր կուսակիցներէն: Ի՞նչ յանգեցնութիւն ուրեմն, այս ստարանութիւնը երկու տարբերակներով ներկայացնող մարդոց համար:

Հոս ալ որոշ է Յակոբ Դ. ի 28 Սեպտեմբեր 1661 թուակիր նամակին հետքերը: Զէ՞ որ հոն ակնարկութիւն եղած էր Պապը անձամբ տեսնելու փափաքին: Ասիկա կը բաւէր իր հակարակորդներուն որպէսզի յաւելեալ ու զարգարեալ տարբերակներով յիշողութեանց մէջ միշտ թաքմ պահէին այս հերիւրանքը, ի գին ամէն սուտի:

Սակայն դառնանք Ղըլմպիկ Սահակի նամակին:

«Ահա երկաքնակութիւն սորա (Յա-